

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГАВАРСКИЙ
ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ

REPUBLIC OF ARMENIA
STATE UNIVERSITY OF GAVAR

<http://www.gsu.am>

1201, Գավառ, Հրանտ Հակոբյան 1
1201, Гавар, ул. Гранта Акобяна 1
1 Hrant Hakobyan str., 1201, Gavar

+ 374 60 46 02 01
+ 374 264 2 57 75
+ 374 60 46 12 99



Գ Ա Վ Ա Ռ Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն
Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Տեղեկացնում ենք, որ Գավառի պետական համալսարանի ամենամյա՝ 24-րդ գիտաժողովը կկայանա **2021 թվականի հուլիսի 3-ին /սկիզբը՝ ժամը 11.00-ին/, առցանց ձևաչափով:**

Մասնակցության համար անհրաժեշտ է մինչև **2021 թվականի հունիսի 20-ը** լրացնել էլեկտրոնային հայտ՝ հետևյալ հղումով. <http://gsu.am/hy/electronicapplication/> և զեկուցումներն ուղարկել ԳՊՀ info@gsu.am, infogsu@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեներին: Ստորև ներկայացնում ենք տեխնիկական պահանջները.

1. գիտական զեկուցումը պետք է լինի 5-ից 10 էջի սահմաններում, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ երկու օրինակից, համակարգչային շարվածքով B 5 (17սմ x 24սմ) չափի տպագրական թղթի վրա, «**GHEA Grapalat**» տառատեսակով, 1,12 միջտողային հեռավորությամբ, թղթի բոլոր կողմերից 18 մմ լուսանցքով, էջադրումը՝ էջի ներքևում (footer), կողմնորոշումը՝ կենտրոն, սահմանները՝ 1սմ:

2. Վերևում նշել վերնագիրը՝ 10,5 տառաչափով (մեծատառերով, թավ՝ Bold):
3. Վերնագրից մեկ տող ներքև՝ աջ անկյունում, նշել հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը (թավ), գիտական աստիճանը և կոչումը (սկսել մեծատառով, նոր տողից), զբաղեցրած պաշտոնը (սկսել նոր տողից):
4. Մեկ տող ներքև՝ 10,5 pt տառաչափով, տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:
5. Մեկ տող բաց թողնելով՝ 10 pt տառաչափով, շեղատառ (italic) և թավ ներկայացվում է զեկուցման ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները:
6. Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել «Բանալի բառեր» և նշել 7-10 բանալի բառեր:
7. Բաց թողնելով երկու տող՝ շարադրել աշխատանքը, վերջում նշելով նաև խմբագրական խորհուրդ ներկայացման և գրախոսման օրը, ամիսը, տարին, օգտագործված գրականության ցանկը, գրականության հղումները:
8. Լատիներեն և հունարեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերն անհրաժեշտ է հավաքել «Microsoft Equation Editor 3.0» ծրագրով, նկարների բացատրությունները և աղյուսակները (ներկայացնել նկարի տեսքով)՝ 10 տառաչափով, ինչպես նաև զեկուցման շարադրանքի լեզվից տարբեր վերը նշված երկու լեզուներով՝ զեկուցման վերնագիրը, ամփոփագիրը, հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը:
9. Անհրաժեշտ է ներկայացնել նաև կարծիք զեկուցման մասին, համապատասխան ամբիոնի կամ գիտական կազմակերպության երաշխավորությունը:

Միաժամանակ, հայտնում ենք, որ գիտաժողովին ներկայացված և տպագրության երաշխավորված զեկուցումները կիրատարակվեն ԳՊՀ գիտական պարբերականում, որը ներառված է ՀՀ ԲՈԿ-ի համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Զեկուցման հրապարակման և հեղինակին (համահեղինակներին) ԳՊՀ գիտական պարբերականի մեկ օրինակի տրամադրման համար ԳՊՀ դասախոսներից և

ասպիրանտներից գումար չի գանձվում, իսկ ԳՊՀ աշխատակից չհանդիսացող հեղինակների (համահեղինակների) համար գանձվող գումարը կազմում է 1 էջը՝ 1800 ՀՀ դրամ:

Վճարումն անհրաժեշտ է կատարել հետևյալ բանկային հաշվին՝ ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ Կամո մ/ճ 16021100146800:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝
(0-60) 46-02-01, (0-60) 46-04-03, (0-60) 46-12-43:

Շնորհակալություն:

ԳՊՀ գիտաժողովի կազմկոմիտե

